ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2



HABITUS 2

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

2

H A B I T U S

STUDIES IN ANTHROPOLOGY AND ARCHAEOLOGY

2

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

2

H A B I T U S

АНТРОПОЛОГИЧЕСКИЕ И АРХЕОЛОГИЧЕСКИЕ ИССЛЕДОВАНИЯ

2

«GITUTYUN» PUBLISHING HOUSE
YEREVAN 2017

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН»
ЕРЕВАН 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Հ 125

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Պավել Ավետիսյան (*գլխավոր խմբագիր*), Լևոն Աբրահամյան, Գրեգորի Արեշյան, Ռուբեն Բադալյան, Պիտեր Քաուի, Տորք Դալալյան (*պատասխանատու քարտուղար*), Պատրիկ Տօնապետեան, Միհրան Գալստյան, Սարգիս Հարությունյան, Թամար Հայրապետյան, Լորի Խաչատուրեան, Թեո վան Լինտ, Հարություն Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Ջուստո Տրաինա

Editorial Board:
Pavel Avetisyan (*editor-in-chief*), Levon Abrahamian, Gregory Areshian, Rouben Badalian, Peter Cowe, Tork Dalalyan (*assistant editor*), Patrick Donabédian, Mihran Galsyan, Sargis Harutyunyan, Tamar Hayrapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Armen Petrosyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Համարի գրախոսներ՝
Հարություն Մարության, *պատմական գիտությունների դոկտոր*
Արսեն Բոբոխյան, *պատմական գիտությունների թեկնածու*

Համարի խմբագիրներ՝
Համլետ Մելքումյան, *պատմական գիտությունների թեկնածու*
Ռոման Հովսեփյան, *կենսաբանական գիտությունների թեկնածու*

Մարդաբանություն, հնագիտություն թեմատիկ երգիծանկարների հեղինակ՝ ազգագրագետ Լևոն Աբրահամյան

The volume is edited by Hamlet Melkumyan *and* Roman Hovsepyan
The cartoons are authored by Levon Abrahamyan, *anthropologist*

Հ 125 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻ-ՏՈՒՍ 2: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան – Եր.: Գիտություն, 2017. – 264 էջ:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-5-8080-1293-6

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սուսաննե Ֆիլինգս
Հայոց պատմությունը քաղաքային առօրեականության մեջ 10

Համլետ Մելքումյան
Հիշողությունից ազգայնականությո՞ւն,
խորհրդային և հետխորհրդային հուշարձանները 42

Էլեն Գրիգորյան
Եվրատեսիլ երգի մրցույթը որպես ինքնությունների,
ազգայնականության և քաղաքականության արտահայտման բեմ 65

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մանուկյան
Կյանքը դեֆիցիտի պայմաններում. կանացի հագուստի
պրակտիկաները Երևանում 1970-80-ականներին 93

ՍՓՅՈՒՌՔ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էլլի Պոնոմարյովա
Բնիկ թիֆլիսցիներ թե՞ Սփյուռք. քննարկում թիֆլիսաբնակ
հայերի կարգավիճակի շուրջ 117

Սյուզաննա Բարսեղյան
Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերար-
տադրման և տարածման գործում 142

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԲՌՆԱԳԱՂԹ

Շուշանիկ Ղազարյան
ՀՀ-ում ադրբեջանահայ փախստականների ինտեգրման
գործընթացում հայերենի իմացության խնդիրը 152

Հասմիկ Գրիգորյան
Հայոց ցեղասպանությունից մինչև «քառօրյա պատերազմ».
բռնության օրինականացման մշակութային գործոնները 163

Լուսինե Տանաջյան
Սոցիալ-մասնագիտական ինտեգրման առանձնահատկությունները
Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 184

Սոնա Ներսիսյան
Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 195

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռոման Հովսեփյան
Հնաբուսաբանական նմուշառում. դաշտային աշխատանքների ուղեցույց 212

Արթուր Պետրոսյան
Քարե գործիքների ուսումնասիրության մեթոդոլոգիան 217

Աննա Ազիզյան
Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ 238

Ավետիս Գրիգորյան
Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները 249

CONTENTS

CULTURAL ANTHROPOLOGY

IDENTITY AND NATIONALISM IN PUBLIC SPACES

Susanne Fehlings
Armenian History in Urban Everyday Life 10

Hamlet Melkumyan
From Memory to Nationalism?
The Soviet and post-Soviet Memorials in Rural Daily Life 42

Elen Grigoryan
Eurovision Song Contest as a Stage: Performing Identities,
Nationalism and Politics 65

SOVIET DAILY LIFE

Lilit Manukyan
Living in Deficiency: Female Clothing Practices in Yerevan in 1970-80s 93

DIASPORA AND NATIONALISM

Elli Ponomareva
Native Tbilisians or Diaspora: Negotiating the Status
of Armenians in Tbilisi 117

Syuzanna Barseghyan
The Role of Armenian Press in Reproduction and Dissemination
of Ethnic and Cultural Values in the Diaspora 142

WAR AND FORCED MIGRATION

Shushanik Ghazaryan
The Importance of Armenian Language in the process of integration
of Armenian refugees from Azerbaijan in Republic of Armenia 152

Hasmik Grigoryan
From The Armenian Genocide to the “4-Day War”
Cultural Factors of Violence Legalization 163

Lusine Tanajyan
Social-professional Features of Integration of Syrian-Armenian
Immigrants in Armenia 184

Sona Nersisyan
Network Relations among Syrian-Armenian Immigrants in Armenia 195

ARCHAEOLOGY

Roman Hovsepyan
Archaeobotanical sampling: Instructions for fieldwork 212

Artur Petrosyan
Methodology for the Study of Stone Artefacts 217

Anna Azizyan
Remarks on the Rare Ornaments of Kura-Araxes Ceramics of Armenia 238

Avetis Grigoryan
The History of Investigation of Antique
and Medieval Sites of the Sotk Region 249

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ARCHAEOLOGY

14

Ավետիս Գրիգորյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ

Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները

Հոդվածը նվիրված է Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանների ուսումնասիրության պատմությանը՝ մասնավորապես վերջին տարիներին իրականացված հնագիտական պեղումների և հետախուզական աշխատանքների արդյունքներին:

Այդ հուշարձաններում 1906-2015 թթ. աշխատած շուրջ մեկուկես տասնյակ գիտական արշավախմբերի կատարած պատմահնագիտական և մշակութաբանական ուսումնասիրություններն էապես ավելացրել են գիտելիքները տարածաշրջանի պատմության և մշակույթի վերաբերյալ: Հետազոտությունները ցույց են տվել, որ տարածաշրջանը գտնվելով առևտրական կարևոր ճանապարհների խաչմերուկում՝ հանդիսացել է ռազմավարական հանգույց, ինչն էլ նպաստել է նրա տնտեսական և մշակութային վերելքին:

Բանալի բառեր. *անտիկ և միջնադարյան հուշարձաններ, Սոթքի շրջան:*

Avetis Grigoryan

Institute of Archaeology and Ethnography, NAS RA

The History of Investigation of Antique and Medieval Sites of the Sotk Region

The article is devoted to the history of investigation of Antique and Medieval period sites of the Sotk region and particularly to the results of archaeological excavations and surveys of recent years. Since 1906 to 2015 over a dozen expeditions realized archaeological and culture-historical researches in the region which demonstrate the significantly increasing knowledge towards its history and culture. Those researches have shown that the region being situated in the crossings of important commercial route, was a strategic center, which promoted to its economic and cultural growth.

Key words: *Sotk Region, Classical and Medieval period sites.*

Аветис Григорян

Античные и средневековые памятники региона Сотк

Данная работа посвящена истории изучения античных и средневековых памятников региона Сотк. С 1906 г. до 2015 г. здесь работали больше десятка научных экспедиций, археологические и исторические исследования существенно увеличили знания о прошлом античной и средневековой Армении. Эти исследования показывают, что регион являлся узловым пунктом находясь на перекрестке важных торговых путей, что привело к экономическому и культурному процветанию региона.

Պատմաաշխարհագրական ակնարկ

Սևանա լճի հարավարևելյան ավազանը հնում կազմում էր պատմական Սոդք գավառի մասը: Այն գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում. շրջափակված է Արեգունու, Սևանի, Արևելյան Սևանի և Վարդենիսի (Ռմբոստյան) լեռնաշղթաներով[1]: Գավառի սահմանները արևելքում ընդգրկում էին նաև Լևոնագետի ու Թարթառի վերնահովիտը (Մռավից մինչև Ծավդեից լեռնաշղթա)՝ ներկայումս ԼՂՀ Նոր Շահումյանի շրջան[2]: Հնագույն ժամանակներից սկսած գավառն ունեցել է կարևոր ռազմավարական նշանակություն. Սոթքով էր անցնում առևտրական-քարավանային Դվին-Պարտավ ճանապարհը, որով իրար էին միանում Հարավային և Արևելյան Կովկասները: Այստեղ են գտնվել այդ ճանապարհի կարևոր ռազմավարական կետեր հանդիսացող «ազատ քաղաք» Մաքենիսը[3], ճանապարհային կայան-քարավանատուն Ջաութիսը, Մերձավոր Արևելքի ամենամեծ՝ Սոթքի ոսկու հանքավայրերը, իշխանանիստ կենտրոններ Ծար, Մեծ Մասրիկ (նախկինում՝ Մեծ Մազրա)[4] և Սոդք ավանները (մանրամասն տե՛ս Մանանդյան 1936: 194-204; նույնի՝ 1940: 8-9; Հարությունյան 1960: 6; Հակոբյան 1966: 93-95; Հարությունյան 1968: 212-220; Մանանդյան 1984: 192-218; Բարխուդարյան 1973: 289-384; Բարխուդարյան 1982: 217-226; Կարապետյան 1986: 232-237; Ժամկոչյան 2005: 40-46; Գրիգորյան 2016: 66-71):

---

1 Օգտակար խորհուրդների և քննարկումների համար խորին շնորհակալություն եմ հայտնում Հուսիկ Մելքոնյանին, Իսեսա Կարապետյանին, Հայկ Հակոբյանին, Ալեքսանդր Յակոբեանին և Արսեն Բոբոխյանին:

2 Սոթք գավառի վերաբերյալ, որն ըստ «Աշխարհացույցի» ընդգրկված էր Սյունիք աշխարհի մեջ, տեղեկություններ են հաղորդում ուրարտական սեպագիր և արամեական արձանագրությունները (վերջիններս թողնված են արտաշիսյան հողաբաժան սահմանաքարերի վրա), անտիկ և միջնադարյան պատմիչներ Կլավդիոս Պտղոմեոսը, Մովսես Խորենացին, Ագաթանգեղոսը, Եղիշեն, Սեբեոսը, Մովսես Կաղանկատվացին, Աբու Իսհակ ալ-Իսթախրին, Շամսուդդին ալ-Մուկադդասին, Գրիգոր Այրիվանեցին, Ամենայն Հայոց կաթողիկոս Հովհաննես Ջ Սսեցին, Վարդան Արևելցին, Ստեփաննոս Օրբելյանը, Մովսես Երեցը, Ամենայն Հայոց կաթողիկոս Սիմեոն Երևանցին, տեղագիրներ Ղուկաս Ինճիճյանը, Հովհաննես եպս. Շահխաթունյանցը, Աղվանից կաթողիկոս Սարգիս արքեպս. Ջալալյանցը, Մակար Բարխուտարյանցը, Մեսրոպ արքեպս. Սմբատյանցը, Ալեքսեյ Իվանովսկին, Ղևոնդ Ալիշանը, Կարապետ եպս., Մեսրոպ արքեպս. Տեր-Մովսիսյանը (Մանրամասն տե՛ս Ալիշան 1893: 63-76; Բարխուտարեանց 1893: 46; Սմբատեանց 1895: 626-634; Պետրոսյան 1984: 175-184; Հարությունյան 1995: 191-208; Հակոբյան, Հմայակյան, Կարապետյան 2001: 18; Հմայակյան 2002: 72-75; Արգարյան 2004: 92; Յակոբեան 2009: Գևորգյան 2013; Ивановский 1911. 21-30; Бархударян 2011. Hakobyan; Hmayakyan 2008. 181-189):

3 Հայտնի էր Մաքենյաց վանքի դպրոցը, որի սաներն են եղել Սողոմոն Ա Գառնեցի կաթողիկոսը, Ստեփաննոս վարդապետը, ծնունդով սոթքեցի Մաշտոց Ա Եղվարդեցի կաթողիկոսը և ուրիշներ:

4 Մեծ Մասրիկը գավառի նշանավոր կենտրոններից էր, ուր այցելեց նաև շահ Աբասը՝ 1606 թվականին, և հատուկ հրովարտակով արտոնություններ շնորհեց Մելիք-Շահնազարյաններին, նվիրեց Վարանդայի մելիքությունը, բազմաթիվ ուրիշ գյուղեր ու դաստակերտեր: Մեծ Մասրիկում է գտնվում Մելիք-Շահնազարյանների տոհմական գերեզմանատունը: Գյուղից հայտնի են շուրջ 5 տասնյակ հրատարակված վիմագրեր և հարյուրից ավել խաչքարեր:

Արարատյան դաշտը Արցախին և Կուրի ստորին հոսանքի տնտեսական ու մշակութային կենտրոններին միացնող քարավանային ճանապարհը հասնելով Սոդք գավառ՝ ճյուղավորվում էր երեք ուղու: Առաջին ճանապարհը Այրք գյուղով (Վերին Շորժայի լեռնանցքով 2751 մ) մտնում էր իշխանանիստ Ծար, մյուսը Թարթառի հովիտ էր իջնում Սոդք ավանի և համանուն լեռնանցքի (2400 մ) վրայով, ապա միանալով առաջինին՝ հասնում Պարտավ: Երրորդ ճանապարհը Սևանի լեռնաշղթայի վրայով իջնում էր Փառիսոս ավան և մտնում Կուրի ավազան (Բարխուդարյան 1973: 5-8):

Սոդք գավառը, որ կոչվել է նաև Ծավդեք, Արտից կամ Ռմբոստեան, Արտաշիյանների և Արշակունիների շրջանում առանձին վարչական միավորի (փոխարքայության)՝ ամբողջ Արցախն իր մեջ ընդգրկող «Ծաւդէացւոց իշխանութեան» կենտրոնն էր, իսկ նրանց անկումից հետո միացվեց Սյունիք նահանգին (Երեմյան 1960: 41-52; Երեմյան 1963: 80; Մելքոնեան 1993: 23-29; Ուլուբաբյան 1994: 9-11): 9-րդ դարում Սոթք գավառն անցնում է Խաչենի իշխանությանը, իսկ դարակեսին դառնում նաև նրա կենտրոնական գավառը, որտեղ իշխում էին Առանշահիկները: 10-11-րդ դդ. Սոթքն ընդգրկված էր Փառիսոսի թագավորության կազմում (Բարխուդարյան 1971: 52-76; Акопян 1987. 241; Յակոբեան 2011: 67-119): 12-16-րդ դարերում Սոթքի տերերն էին Դոփյանները (Վախթանգյաններ), 16-18-րդ դարերում՝ Մելիք-Շահնազարյանները (Ուլուբեկյաններ) (Կարապետ եպս. 1914: 34; Ուլուբաբյան 1975: 403-408; Կարապետյան 1999: 10-11; Հակոբյան 2007: 205-207; Մաղալյան 2007: 158-161): Սոթքում իշխած բոլոր այս տոհմերը ժառանգական կապեր ունեին միմյանց հետ և ծագում էին «Ծավդէից երկրի իշխաններից»՝ «Զօրանամակ»-ի «Ծավդէացի» իշխանատոհմից (Յակոբեան 2011: 543; տե՛ս նաև Խորենացի 1997: 126-127):

18-րդ դ. 20-30-ական թթ. գրեթե ողջ գավառը հայաթափվում է՝ կապված Ղրիմի թաթարների և կովկասյան ցեղերի (մասնավորապես լեզգիների) մի քանի ասպատակությունների հետ, իսկ Կուր-Արաքսյան տափաստանների թուրք-քրդական ծագմամբ քոչվորական որոշ ցեղախմբեր, ինչպես օրինակ քոլանիները, այստեղ անցնում են նստակեցության (Լեո 1973: 303; Կարապետյան 1999: 31-32; տե՛ս նաև Յակոբեան 2009: 225-245; Աղանեանց 1894: 494; Գեղամյանց 2010: 73-74):

Անտիկ և միջնադարյան հուշարձանների ուսումնասիրության պատմությունը

Ստորև ներկայացվում է Սոթքի տարածաշրջանում հիշյալ դարաշրջաններով թվագրվող հնագիտական հուշարձանների (ամրոցներ, բնակավայրեր, եկեղեցիներ, գերեզմանատներ) պեղումների և հետազոտությունների պատմությունը՝ ըստ ժամանակագրական հաջորդականության[5]:

5 Աշխատանքում օգտագործվել են Ե. Լալայանի, Ա. Քալանթարի, Ս. Բարխուդարյանի, Գ. Միքայելյանի, Գ. Տիրացյանի, Ժ. Խաչատրյանի, Ա. Քալանթարյանի, Հ. Մնացականյանի, Ի. Կարապետյանի, Հ. Կարապետյանի, Հ. Օհանյանի, Մ. Ջարդարյանի, Ա. Մանուկյանի,

Սոթքի տարածաշրջանում առաջինը Ե. Լալայանն էր, որ 1906-8 թթ. հնագիտական լայնածավալ աշխատանքներ իրականացրեց՝ պեղելով տարբեր դարաշրջաններով (այդ թվում անտիկ և միջնադարյան) թվագրվող տասնյակ դամբարաններ, կատարեց այդ դամբարանների տիպերի և գտածոների դասակարգում (Լալայան 1931: 73):

Տարածաշրջանի հնագիտական ուսումնասիրությունները հաճախակիացան խորհրդային տարիներին. Հայաստանի հնությունների պահպանության կոմիտեն 1926–28 թթ. ուսումնասիրություններ կատարեց Սոթքի տարածաշրջանում՝ տեխնիկական ստուգման ենթարկելով պատմամշակութային կարևոր շինությունների մեծ մասը: Անխուսափելի կործանումից փրկելու համար մանր նորոգումներ արվեցին Սոթքի եկեղեցում: Կատարվեց նաև թափված բեկորների հավաքում և տեղային հնադարանների հիմնում. հնադարան-թանգարան հիմնվեց Սոթքում: Աշխատանքներ սկսեցին տարվել այդպիսին նաև Մեծ Մասրիկում հիմնելու համար, որը սակայն չիրականացավ (Քալանթար 1931: 3-6):

Ս. Բարխուդարյանն ու Գ. Տիրացյանը 1960-ականներին մասնակի պեղումներ կատարեցին Ակունքի մ. թ. ա 6 – մ. թ. 17-րդ դդ. թվագրվող բնակավայրում: Հզոր պարիսպներով շրջապատված խոշոր բնակավայրը կարևոր կետ է հանդիսացել Կոթ-Պարտավ առևտրական ճանապարհին (Խաչատրյան և Քալանթարյան 1972: 58–67):

1960–70-ական թթ. տարածաշրջանում մեծածավալ հետազոտական աշխատանք կատարեց վիմագրագետ Ս. Բարխուդարյանը՝ հրատարակելով գավառի 19 բնակավայրերի 338 վիմագրեր ՀՀ տարածքում և 5 բնակավայրերի 42 վիմագրեր ԼՂՀ տարածքում: Անդրադարձավ այդ բնակավայրերի պատմությանը և հնություններին (Բարխուդարյան 1973: 289-384; նույնի՝ 1982: 217-226):

1975-1991 թթ. Ի. Կարապետյանի գլխավորությամբ սիստեմատիկ պեղումներ իրականացվեցին մ.թ.ա. 4-րդ – մ.թ.ա. 1-ին դդ. պարսպապատ բնակավայր Կարճաղբյուրում (գտնվում է Մարտունի-Վարդենիս հին և նոր խճուղիների միջև), որը լճի մակարդակի բարձրացման հետևանքով լքվել և վերածվել է դամբարանադաշտի: Դրանից հյուսիս՝ ավելի վաղ լքված բնակավայրի վրա, բացվեցին նաև մ. թ. 2–3-րդ դդ. թաղումներ: Բնակավայրի ճարտարապետաշինարարական տեխնիկայի և հնագիտական նյութի տվյալներից ելնելով կարելի է ասել, որ Կարճաղբյուրը եղել է ծովամթերքի արտադրության մասնագիտացված քաղաքատիպ ավան: Այդ մասին են խոսում ձկնորսության

Ս. Հմայակյանի, Ռ. Բիշիոնեի, Ն. Պարմեջիանիի, Հ. Սիմոնյանի, Հ. Հակոբյանի, Հ. Սանամյանի, Հ. Պետրոսյանի, Լ. Կիրակոսյանի, Ք. Ավետիսյանի կատարած հնագիտական, վիմագրական և մշակութաբանական ուսումնասիրությունների արդյունքները: Հատուկ ուշադրություն է դարձվել Սոթքի հայ-գերմանական հնագիտական և երկրաբանական արշավախմբի կատարած աշխատանքներին:

համար նախատեսված ծանրոց-կախիկներն ու մեծ չափերի ասեղները, որ հայտնաբերվել են պեղված գրեթե բոլոր բնակարաններից, պատերին կից բուխարիները, որոնք հելլենիստական քաղաքային մշակույթի տարրեր են և սալարկված հատակները (Կարապետյան 1979: 268-277; Կարապետյան 1979: 21-22; Կարապետյան 1981: 29-30; Կարապետյան 1987: 44-46; Կարապետյան 1989: 56-57; Карапетян 1980. 36-38; Карапетян 1988. 33-34):

Կարճաղբյուր գյուղում 1971թ. Հ.Մնացականյանի կողմից իրականացված դամբարանային պեղումների արդյունքում ի թիվս վաղ շրջանի բազմաթիվ թաղումների, հայտնաբերվել են հելլենիստական թաղումներ, որոնց արդյունքները չեն հրատարակվել:

1979թ. Հ. Օհանյանի կողմից պեղումներ իրականացվեցին Կարճաղբյուրի «Քարե դուռ» ամրոցում, որտեղ բացվեց մ.թ.ա. 3-1-ին դդ. դամբարան (Օհանյան 1981: 31-32):

1978թ. Ժ.Խաչատրյանի, Մ.Զարդարյանի և Ա.Մանուկյանի կողմից պեղումներ կատարվեցին Ակունքի «Կլոր բլուր» ամրոցում: Հայտնաբերված ամրաշինական համակարգի մնացորդներով և խեցեղենով հուշարձանը թվագրվեց անտիկից ուշ միջնադար (Хачатрян, Зардарян, Манукян 1979. 527):

1979–87 և 1993–96թթ. հուշարձանագետ Ս.Կարապետյանը հետազոտեց Սոդք գավառի ԼՂՀ հատվածի հուշարձանները՝ Հանդաբերդը, Դռփյանների իշխանանիստ Ծար գյուղի եկեղեցիները, Չափնիի հուշարձանախումբը, Ցրտնոտի (Թարթառ), Լևի (Լևոնագետ), Չափնիի (Լևոնագետ) 12–14դդ. կամուրջները (Կարապետյան 1999: 22; Կարապետյան 2009: 36–50; տե՛ս նաև Շահխաթունեան 1842: 356–365; Ջալալեանց 1842: 208–215; Բարխուտարեանց 1895: 275; Կաղանկատուացի 1983: 340; Գանձակեցի 1961: 322; Խաչիկյան 1950: 84; Տէր-Մովսիսեան 1938: 93; Բարխուդարյան 1982: 225; Մկրտչյան 1985: 37-38, Հասրաթյան 1992: 85-86):

1980-ականներին հուշարձանների վերականգնողական աշխատանքներ իրականացրեց Պետական հուշարձանների պահպանության հայկական ընկերությունը՝ վերականգնելով Վանևանի բազիլիկ եկեղեցին և գավիթը (1983–88թթ.), մասնակի վերականգնելով Սոթքի բազիլիկ եկեղեցին (1986-1991թթ.) (Հարությունյան 1999: 25–26; հմմտ. նաև Սարգսյան, Հովսեփյան, Մարտիրոսյան 1982: 89–112):

1980-ականների կեսերին տարածաշրջանում հետազոտական մեծ աշխատանք կատարեց վիմագրագետ Հ.Կարապետյանը՝ հրատարակելով 7 բնակավայրի շուրջ 39 նորահայտ վիմագրեր և 5 վիմագիր, որոնք բացթողումներով էին հրատարակվել Ս.Բարխուդարյանի կողմից (Կարապետյան 1987: 99–103):

Տարածաշրջանում լայնածավալ ուսումնասիրությունները շարունակվեցին նաև հետխորհրդային շրջանում, երբ ստեղծվեց որակական նոր իրա-

վիճակ՝ պայմանավորված հայ-ադրբեջանական հակամարտության փուլում տարածաշրջանի բնակչության կազմի փոփոխությամբ: Մեծամասնություն կազմող տեղի թյուրքախոս բնակչությունը շուրջ 250-ամյա հաստատումից հետո հեռացավ, վերացան հայկական մշակութային հուշարձանների ուսումնասիրության և պահպանության հետ կապված նախկին խոչընդոտները:

Անկախությունից հետո առաջինը հայ-իտալական միացյալ հնագիտական արշավախումբն էր, որ 1995–2001 թթ. կատարեց Սոթքի տարածաշրջանի ամրոցների, բնակավայրերի, դամբարանների, եկեղեցիների տարածքների վերգետնյա խեցեղենի տիպաբանում, այդ հուշարձանների նախնական թվագրում, ամրոցների դասակարգում ըստ գործառնական նշանակության, չափագրում և հատակագծում: Արշավախումբը 1997 թ. հետախուզական պեղումներ իրականացրեց Այրք 1 ամրոց-բնակատեղիում, որտեղ հայտնաբերվեցին հելլենիստական մշակութային շերտեր, 12–17-րդ դդ. երկու եկեղեցիներ և գերեզմանատուն (Մանրամասն տե՛ս Հմայակյան, Բիշիոնե, Պարմեջիանի 1996: 47–49; Հմայակյան, Հակոբյան, Բիշիոնե, Պարմեջիանի 1998: 39–41; Հմայակյան, Սանամյան 1998: 41–42; Հակոբյան 2002: 58–59; Biscione, Hmayakyan, Parmegiani, Sayadyan 2002. 61–249; Hakobyan 2002. 301-317; Sanamyan 2002. 325–350):

2004–5 թթ. Հ. Պետրոսյանի գլխավորությամբ պեղումներ իրականացվեցին Հանդաբերդի վանքում: Վանքը գտնվում է ԼՂՀ Նոր Շահումյանի շրջանում: Տեղադրված է Լևոնագետի միջնահովտի աջ ափին՝ Հանդաբերդ ամրոցից մոտ 1 կմ հյուսիս-արևելք: Համալիրի շինությունների հիմնական մասը, ըստ շինարարական արձանագրության, կառուցվել է 1276 թ. Դավիթ վարպետի կողմից՝ ավելի հին եկեղեցու շուրջը: Վանական համալիրը գոյատևել է մինչև 14-րդ դ. կեսերը կամ վերջերը: Համալիրը բաղկացած է հինգ մեծ ու փոքր եկեղեցիներից, գավիթ-ժամատնից և զանգակատնից:

Պեղումների ամենամեծ արդյունքներից մեկը մոտ 180 խաչքարի ու խաչաքանդակ սալերի հայտնաբերումն էր, որոնցից միայն մի փոքր մասն էր տեսանելի մինչև պեղումները: Հայտնաբերվել են շինարարական, նվիրատվական և հիշատակային բնույթի բազմաթիվ վիմագրեր (Պետրոսյան, Կիրակոսյան, Սաֆարյան 2009: 1–108; տե՛ս նաև Սիմոնյան, Սանամյան 1996: 71–73; Կարապետյան 1999: 29–30; Պետրոսյան, Կիրակոսյան, Սաֆարյան 2005. 240–246; Պետրոսյան, Կիրակոսյան, Սաֆարյան 2007: 446–454; Պետրոսյան, Կիրակոսյան, Սաֆարյան 2008: 247–255; Պետրոսյան, Կիրակոսյան 2009: 14-23):

Հ. Պետրոսյանը և Ք. Ավետիսյանը կատարել են նաև մշակութաբանական ուսումնասիրություններ. անդրադարձել են Սոթքից ծագող 16-17 դդ. որոշ խաչքարերի պատկերագրությանն ու իմաստաբանությանը, իսկ Հ. Մարգարյանը մշակութաբանական և արվեստաբանական քննության է ենթարկել Վարդենիսից պատահաբար հայտնաբերված կավե մի տեռակոտա, որը թվագրվում

է մ.թ. 1-2-դ դդ. (Ավետիսյան 1999: 7-12; Մարգարյան 2000: 167-176; Պետրոսյան 2008: 219-221):

2010–15 թթ. տարածաշրջանում պեղումներ և հետախուզական աշխատանքներ իրականացրեց ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախումբը՝ Ա.Բոբոխյանի գլխավորությամբ: Հայտնաբերվեցին հիշյալ դարաշրջաններով թվագրվող 15 ամրոցներ և բնակատեղիներ Սոթքում, Նորաբակում, Ազատում, Ջաղացաձորում, Վերին Շորժայում ևն (Kunze, Bobokhyan, Meliksetian, Pernicka 2011. 17-49; Wolf, Borg, Pernicka, Meliksetian, Klinze, Bobokhyan 2011. 51-72; Bobokhyan, Kunze, Meliksetian, Pernicka, Meller 2012. 342-354; հմմտ. նաև Վանյան 2012: 148-151; Ամիրյան 2014: 17-31; Դանիելյան 2014: 124-136; Ամիրյան, Դանիելյան, Սիմոնյան, Վանյան, Գրիգորյան 2015: 123-130): Ուսումնասիրվող դարաշրջանի համար ուշագրավ են Նորաբակ 1, Սոթք 1 և Սոթք 2 բնակավայրերը:

Նորաբակ 1 ամրոց-բնակավայրը գտնվում է համանուն գյուղի արևելյան ծայրամասում: Պեղումների արդյունքում պարզվեց, որ այն կառուցվել է վաղ երկաթի դարաշրջանում և շարունակել օգտագործվել մինչ զարգացած միջնադար:

Սոթք 1 ամրոց-դիտակետը գտնվում է համանուն գյուղի կենտրոնում՝ գետամերձ բլրի վրա: Պեղումների արդյունքում պարզվեց, որ վաղ միջնադարում ունեցել է «ճանապարհային ամրոցի» գործառույթ և շնորհիվ իր հարմարավետ դիրքի՝ վերահսկել լեռնանցք մտնող առևտրական ուղին: Հետագայում, կորցնելով ռազմավարական կարևորությունը, բլուրը վեր է ածվում գերեզմանոցի: Ավելի ուշ՝ հավանաբար 13-րդ դ. բլուրը դարձյալ բնակեցվում է, սակայն առկա նյութի պայմաններում, առայժմ, հնարավոր չէ խոսել այդ շրջանում բնակավայրի գործունեության մասին որպես ռազմական հենակետ:

Պեղված երրորդ ամրոց-բնակատեղին Սոթք 2-ն է: Վերջինս գտնվում է գյուղի արևելյան կողմում՝ շրջապատի նկատմամբ վերահսկող դիրք ունեցով բլրի վրա և դարձյալ լեռնանցք մտնող ճանապարհի եզրին: Բրոնզեդարյան բնակատեղին ցույց է տալիս բնակության թույլ հետքեր ուշ միջնադարում, ինչպես ցույց է տալիս հուշարձանից հայտնաբերված խեցեղեն նյութը:

Այսպիսով, թվարկված երեք հուշարձաններն էլ ունեցել են գրեթե նույն գործառութային նշանակությունը և վերահսկել ռազմավարական կարևոր ուղին:

Ստորև բերված աղյուսակում ներկայացվում է Սոթքի տարածաշրջանի հնագիտական հուշարձաններում 1906–2015 թթ. կատարված աշխատանքների ընդհանուր պատկերը:

Ժամանակը	Արշավախմբի ղեկավարը	Գտնվելու վայրը	Հուշարձանի տեսակը	Կատարված աշխատանքները	Թվագրությունը
1906–1908	Ե. Լալայան	Սևանա լճի հարավ-արևելյան ավազան	դամբարան	պեղումներ	անտիկ, միջնադար
1926–1928	Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե	գ. Սոթք	եկեղեցի	նորոգում, հնադարանի հիմնում	միջնադար
1960–ականներ	Ս. Բարխուդարյան, Գ. Տիրացյան	գ. Ակունք	ամրոց-բնակավայր	պեղումներ	անտիկ, միջնադար
1960–70–ականներ	Ս. Բարխուդարյան	Սևանա լճի հարավ-ռևելյան ավազան, Թարթառի վերնահովիտ	եկեղեցի, խաչքար, տապանաքար	վիմագրերի հրատարակում	միջնադար
1971	Հ. Մնացականյան	գ. Կարճաղբյուր	դամբարան	պեղումներ	անտիկ
1975–1991	Ի. Կարապետյան	գ. Կարճաղբյուր	բնակավայր, դամբարան	պեղումներ	անտիկ
1978	Ժ. Խաչատրյան, Մ. Զարդարյան, Ա. Մանուկյան	գ. Ակունք՝ «Կլոր բլուր»	ամրոց	պեղումներ	անտիկ, միջնադար
1979	Հ. Օհանյան	գ. Կարճաղբյուր՝ «Քարե դուռ»	ամրոց, դամբարան	պեղումներ	անտիկ
1979–1996	Ս. Կարապետյան	Թարթառի վերնահովիտ	եկեղեցի, խաչքար, տապանաքար	վիմագրերի հրատարակում	միջնադար
1983–1988	Պետական հուշարձանների պահպանության հայկական ընկերություն	գ. Վանևան, գ. Սոթք	եկեղեցի	նորոգում	միջնադար
1980–ականներ	Հ. Կարապետյան	Սևանա լճի հարավ-արևելյան ավազան	եկեղեցի, խաչքար, տապանաքար	վիմագրերի հրատարակում	միջնադար
1995–2001	Հայ-իտալական հնագիտական արշավախումբ	Սևանա լճի հարավարևելյան ավազան	ամրոց, եկեղեցի, դամբարան, սահմանաքար	պեղումներ, հետախուզություն	անտիկ, միջնադար

2004–2005	Հ. Պետրոսյան	Հանդաբերդի վանք	եկեղեցի, խաչքար, տապանաքար	պեղումներ, վիմագրերի հրատարակում	միջնադար
2010–2015	Հայ-գերմանական հնագիտական արշավախումբ	Սևանա լճի հարավ-արևելյան ավազան	ամրոց, բնակավայր, դամբարանն	պեղումներ, հետախուզություն	անտիկ, միջնադար

Ամփոփում

Հետազոտությունները ցույց են տալիս, որ Սոթքը անտիկ շրջանում և միջնադարում կարևոր ռազմավարական հանգույց է հանդիսացել: Նախորդ դարաշրջաններից ժառանգված բնակավայրային և ամրաշինական խիտ ցանցը ներդաշնակ կերպով ներմուծվել է անտիկ դարաշրջանի մշակութային լանդշաֆտ՝ միջնադարում հարստանալով հայ քրիստոնեական ինքնության ամենաբնութագրական խորհրդանշաններով՝ եկեղեցիներով, խաչքարերով և տապանաքարերով: Գտնելով միջնադարյան Դվին-Պարտավ առևտրական ճանապարհի վրա՝ գավառի բնակավայրերը, պաշտպանական համակարգերը, ճանապարհային կայաններն ու քարավանատները կարևոր դեր են խաղացել միջազգային հաղորդակցության և առևտրի կազմակերպման գործում: Սոթքի տարածաշրջանի հնագիտական հուշարձաններում 1906-2015 թթ. իրականացված պատմահնագիտական հետազոտություններն էապես ավելացրել են գիտելիքները տարածաշրջանի պատմության և մշակույթի վերաբերյալ:

Գրականություն

***Աբգարյան Գ.* 2004.**
Պատմութիւն Սեբէոսի: Երևան:

***Ալիշան Ղ.* 1893.**
Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի: Ս. Ղազար, 63-76:

***Աղանեանց Գ.* 1894.**
Դիւան Հայոց Պատմութեան, Գ, Թիֆլիզ:

***Ամիրյան Մ.* 2014.**
Սևանա լճի հարավարևելյան ավազանը պատմահնագիտական համատեքստում (Ք.ա. XV-VII դդ.): Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, IX-X, Հոդվածների ժողովածու: Երևան, 17-31:

***Ամիրյան Մ., Դանիելյան Հ., Սիմոնյան Հ., Վանյան Հ., Գրիգորյան Ա.* 2015.**
Սրբազան լանդշաֆտի տարրերը Սոթքի տարածաշրջանում: Բրոնզ-երկաթեդարյան Սյունիքի «սրբազան լանդշաֆտը». հնագիտական հետազոտություններ, Երևան, 123-130:

***Ավետիսյան Ք.* 1999.**
Սոդքի 16-17-րդ դդ. խաչքարի պատկերագրությունը: «Ավարայր», 2, 7-12:

***Բարխուդարեանց Մ.* 1893.**
Աղուանից երկիր և դրացիք: Թիֆլիս:

***Բարխուդարեանց Մ.* 1895.**
Արցախ, Բագու:

***Բարխուդարյան Ս.* 1971.**
Արցախի, Շաքիի և Փառիսոսի իշխանությունները IX-X դարերում: Պատմաբանասիրական հանդես, 1, 52-76:

***Բարխուդարյան Ս.* 1973.**
Գեղարքունիք: Դիվան հայ վիմագրության, 4, Երևան:

***Բարխուդարյան Ս.* 1982.**
Արցախ: Դիվան հայ վիմագրության, 5, Երևան:

***Գևորգյան Տ.* 2013.**
Հայոց արևելից կողմերը ըստ «Աշխարհացոյցի»-ի: Ատենախոսության սեղմագիր: Երևան:

***Գեղամյանց Ե. (Հայկունի)* 2010.**
Ուղեգնացական ակնարկներ, Երևան:

***Գրիգորյան Ա.* 2016.**
Նոր հետազոտություններ Սոթքում և Ջաութիս կայան-քարավանատան տեղադրության խնդիրը: «Հայաստանը և Արևելաքրիստոնեական քաղաքակրթությունը», Միջազգային գիտաժողով, Զեկուցումներ և զեկուցումների դրույթներ: Երևան, 66-71:

***Դանիելյան Հ.* 2014.**
Նոր տվյալներ հնագույն Հայաստանի պաշտպանական համակարգի վերաբերյալ: Մերձավոր արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, IX-X, Հոդվածների ժողովածու: Երևան, 124-136:

***Երեմյան Ս.* 1960.**
«Ծաղդեացւոց իշխանութիւն», «Լրաբեր հասարակական գիտությունների», 7-8, 41-52:

***Երեմյան Ս.* 1963.**
Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»: Երևան:

***Ժամկոչյան Ա.* 2005.**
Դվին-Պարտավ ճանապարհը վաղ միջնադարում (5-9-րդ դդ): «Էջմիածին», ԺԲ, 2005, 40-46:

***Լալայան Ե.* 1931.**
Դամբարանների պեղումները խորհրդային Հայաստանում: Երևան:

***Լեո.* 1973.**
Հայոց պատմություն, հ. 3, գիրք երկրորդ: Երևան:

***Խաչատրյան Ժ., Քալանթարյան Ա.* 1972.**
Մարտունու և Վարդենիսի շրջանների անտիկ և միջնադարյան հուշարձանները: «Լրաբեր հասարակական գիտությունների», 1, 58-67:

***Կարապետ եպ.* 1914.**
Դօփեանք և Մելիք Շահնազարեանք: Նիւթեր հայ մելիքութեան մասին, Բ, Ս. Էջմիածին:

***Կարապետյան Ի.* 1979.**
Կարճաղբյուրի պեղումները (1975-1978 թթ.): «Պատմա-բանասիրական հանդես», 3, 268-277:

***Կարապետյան Ի.* 1979.**
Կարճաղբյուրի պեղումները 1977-78 թթ.: Հայկական ՍՍՀ-ում 1977-1978 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ: Երևան, 21-22:

***Կարապետյան Ի.* 1981.**
Կարճաղբյուրի պեղումները 1979-80 թթ.: Հայկական ՍՍՀ-ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ: Երևան, 29-30:

***Կարապետյան Ի.* 1987.**
Կարճաղբյուրի պեղումները: Հայկական ՍՍՀ-ում 1985-1986 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ: Երևան, 44-46:

***Կարապետյան Ի.* 1989.**
Կարճաղբյուրի 1987 թ. պեղումները: Հայկական ԽՍՀ-ում 1987-1988 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված գիտական նստաշրջան, Զեկուցումների թեզիսներ: Երևան, 56-57:

***Կարապետյան Հ.* 1986.**
Մեծ Մազրա գյուղի վիմագրերը: «Պատմա-բանասիրական հանդես», 2, 232-237:

***Կարապետյան Հ.* 1987.**
Նշմարներ Վարդենիսի վիմագրությունից: Հուշարձան: Երևան: 1, 99-103,

***Կարապետյան Ս.* 1999.**
Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում: Երևան:

***Կարապետյան Ս.* 1999.**
Քոլանիներն Արցախում: «Իրան-Նամէ», 32-34, 31-32:

***Կարապետյան Ս.* 2009.**
Արցախի կամուրջները: Երևան:

***Կիրակոս Գանձակեցի,* 1961.**
Պատմություն Հայոց: Երևան:

***Հակոբյան Թ.* 1966.**
Սյունիքի թագավորությունը (պատմաաշխարհագրական առումով): Երևան:

***Հակոբյան Թ.* 2007.**
Հայաստանի պատմական աշխարհագրություն: Երևան:

***Հակոբյան Հ., Համայակյան Ս., Կարապետյան Ի.* 2001.**
Արտաշիսյան սահմանաքարերի նոր գյուտեր Սևանի ավազանից: Մաշտոցյան ընթերցումներ: Գ, Օշական, «Ս.Մեսրոպ Մաշտոց դպրատուն», 18:

Հակոբյան Հ. **2002.**
Հետուրարտական խեցեղենի ուսումնասիրության փորձ (Սևանա լճի հարավային ավազան): Հին Հայաստանի մշակույթը, XII, Հանրապետական գիտական նստաշրջան, Զեկուցումների հիմնադրույթներ: Երևան, 58-59:

Հասրաթյան Մ. **1992.**
Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը, Երևան:

Հարությունյան Բ. **1968.**
Դվին-Պարտավ ճանապարհի Sisajan-Gelakuni գծամասը: «Պատմա-բանասիրական հանդես», 1, 212-220:

Հարությունյան Բ. **1995.**
Արցախի, Հայոց Արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջ: «Պատմա-բանասիրական հանդես», 1, 191-208:

Հարությունյան Վ. **1999.**
Ազգանվեր ջանքերի հանրագումարը: Երևան:

Հարությունյան Վ. **1960.**
Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները: Երևան, 6:

Հմայակյան Ս., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. **1996.**
Սևանա լճի ավազանում հայ-իտալական արշավախմբի 1994-1995 թթ. կատարած ուսումնասիրությունների արդյունքները: ԴՀԱԱԳՆ: Երևան, 47-49:

Հմայակյան Ս., Հակոբյան Հ., Բիշիոնե Ռ., Պարմեջիանի Ն. **1998.**
Սևանի ավազանում հայ-իտալական արշավախմբի 1996-1997 թթ. կատարած ուսումնասիրությունների արդյունքները: Հին Հայաստանի մշակույթը, XI, Երևան:

Հմայակյան Ս., Սանամյան Հ. **1998.**
Սևանա լճի հարավային ավազանի պաշտպանական համակարգի մասին: Հին Հայաստանի Մշակույթը, XI: Երևան:

Հմայակյան Ս. **2002.**
Արտաշեսյան սահմանաքարերի շուրջ: Հայաստանի հնագույն մշակույթը, 2, 72-76:

Մաղալյան Ա. **2007.**
Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ., Երևան, էջ 158-161:

Մանանդյան Հ. **1936.**
Հայաստանի գլխավոր ճանապարհները ըստ Պևտինգերյան քարտեզի: Երևան:

Մանանդյան Հ. **1940.**
Հայաստանի քաղաքները 10-11-րդ դարերում, Երևան:

Մանանդյան Հ. **1984.**
Դվին-Պարտավ հին ճանապարհը: Երկեր, Երևան, 192-218:

Մարգարյան Հ. **2000.**
Վարդենիսի անտիկ տեռակոտան: «Պատմա-բանասիրական հանդես», 1, 167-176:

***Մելքոնեան Ա.* 1993.**
Հայկական Քարվաճառ և Աղահեճք գաւառները պատմութեան մեջ: «Դրօշակ», 15, 23-29:

***Մկրտչյան Ծ.* 1985.**
Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները: Երևան:

***Մովսես Խորենացի*, 1997.**
Հայոց պատմություն: Երևան:

***Մովսէս Կաղանկատուացի*, 1983.**
Պատմութիւն Աղուանից աշխարհի: Երևան:

***Յակոբեան Ա.* 2009.**
Պատմա-աշխարհագրական և վիմագրագիտական հետազոտութիւններ (Արցախ և Ուտիք): Վիեննա-Երևան:

***Յակոբեան Ա.* 2011.**
Բուն Աղուանքի և Հայոց Արևելից կողմանց թագաւորութիւնները Թ-Ժ դարերում (Աղբիւրագիտական դիտարկումներ): «Հանդէս ամսօրեայ», Վիեննա-Երևան, 67-119:

***Յակոբեան Ա.* 2011.**
«Գահնամակ ազատաց և տանուտէրանց Հայոց» և «Զաւրանամակ»: Բազմավէպ, Վենետիկ, 3-4, 543:

***Շահխաթունեան Յ.* 1842.**
Ստորագրութիւն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, Բ: Էջմիածին:

***Պետրոսյան Հ.* 2008.**
Խաչքար. ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը: Երևան:

***Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.* 2005.**
Հանդաբերդի վանքի 2004 թ. պեղումների հիմնական արդյունքները: Հին Հայաստանի մշակույթը, 13, 240-246:

***Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.* 2007.**
Հանդաբերդի վանքի 2004-2005թթ. պեղումները: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով (Զեկուցումների ժողովածու): Երևան, 446-454:

***Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.* 2008.**
Հանդաբերդի վանքի 2004-2005թթ. պեղումները: Հին Հայաստանի մշակույթը, 14: Երևան, 247-255:

***Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ.* 2009.**
Մշակութային հետազոտություններ Արցախում. Շուշի, Հանդաբերդի վանք, Տիգրանակերտ: Երևան:

***Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ.* 2009.**
Հանդաբերդի վանքը և նրա պեղումները: Երևան:

***Պետրոսյան Ս.* 1984.**
Սարդուրի II-ի անդրսևանյան արշավանքի երթուղու շուրջ: «Պատմա-բանասիրական հանդես», 2, 175-184:

***Ջալալեանց Ս.* 1842.**
Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան: Հ. Ա, Տփխիս:

***Սարգսյան Ա., Հովսեփյան Է., Մարտիրոսյան Մ.* 1982.**
Դարերից ժառանգած՝ դարերի համար (փաստաթղթեր Սովետական Հայաստանում պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության պատմությունից (1921-1941 թթ.): Բանբեր Հայաստանի արխիվների, 3(64), 89-112:

***Սիմոնյան Հ., Սանամյան Հ.* 1996.**
Հանդաբերդի վանական համալիրը: ՀՀ-ում 1993-1995 թթ. հնագիտական հետազոտությունների արդյունքներին նվիրված 10-րդ գիտական նստաշրջան, Զեկուցման թեզեր: Երևան, 71-73:

***Սմբատեանց Մ.* 1895.**
Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գաւառի որ այժմ Նոր-Բայազիտ գաւառ: Վաղարշապատ:

***Վանյան Հ.* 2012.**
Հնագիտական աշխատանքներ Սոթքում: ԵՊՀ ՈւԳԸ գիտական հոդվածների ժողովածու: Երևան, 148-151:

***Տէր-Մովսիսեան Մ.* 1938.**
Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Դադի եկեղեցիները և վանական շինութիւնները...: Երուսաղեմ:

***Ուլուբաբյան Բ.* 1975.**
Խաչենի իշխանությունը X-XVI դարերում: Երևան:

***Ուլուբաբյան Բ.* 1994.**
Արցախի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը: Երևան:

***Քալանթար Ա.* 1931.**
Հայաստանի հնությունների պահպանության կոմիտե, Գիտությունը և գիտական-հետազոտական աշխատանքները Խորհրդային Հայաստանում 1920-30: Երևան:

***Օհանյան Հ.* 1981.**
Հելլենիստական ժամանակաշրջանի դամբարան Կարճաղբյուր գյուղի Քարե դուռ ամրոցում (Վարդենիսի շրջան): Հայկական ՍՍՀ-ում 1979-1980 թթ. դաշտային հնագիտական աշխատանքների արդյունքներին նվիրված զեկուցումների թեզիսներ: Երևան, 31-32:

***Акопян А.* 1987.**
Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках. Ереван.

***Бархударян С.* 2011.**
Страницы из истории Арцаха и армяно-албанских отношений. Ереван.

***Ивановский А.* 1911.**
Материалы по археологий Кавказа. Москва.

***Карапетян И.* 1980.**
Эллинистическая культура и сельские поселения Армении (по материалам раскопок поселения Карчахпюр). Всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на востоке I, тезисы докладов. Ереван, 36-38.

***Карапетян И.* 1988.**
Античное поселение Карчахпюр. Третий всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на востоке, тезисы докладов, издательство на Армянской СССР. Ереван, 33-34.

***Хачатрян Ж., Зардарян М., Манукян А.* 1979.**
Раскопки в Акунке. Археологические открытия 1978 года. Москва, 527.

***Biscione R., Hmayakyan S., Parmegiani N., Sayadyan Y.* 2002.**
Description of the sites, : The North-Eastern Frontier Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin. I. The Southern Shores. Documenti Asiana VII. CNR: Inst. Di Studi Sulle Civilta Dell'Egeo E Del Vicino Oriente. Roma, 61-249.

***Bobokhyan A., Kunze R., Meliksetian Kh., Pernicka E., Meller H.* 2012.**
Archaeological Investigations around the Gold Mines of Sotk, Armenia. International Symposium on East Anatolia - South Caucasus Cultures. 10-13 October 2012, (Işikl1 M., Can B. ed.), Erzurum University, Cambridge, 342-354.

***Hakobyan H.* 2002.**
The Surface Pottery of the Early Armenian, Hellenistic and Roman Periods From the Southern Sevan Basin. The North-Eastern Frontier Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin. I. The Southern Shores. Documenti Asiana VII. CNR: Inst. Di Studi Sulle Civilta Dell'Egeo E Del Vicino Oriente. Roma, 301-317.

***Hakobyan H., Hmayakyan S.* 2008.**
Recently Found Boundary Stelae from Sevan Basin. Aramazd: Armenian Journal of Near eastern Studies, (3)2, 181-189.

***Sanamyan H.* 2002.**
Architectural structure, defensive systems and building technique of the fortifications, The North-Eastern Frontier Urartians and Non-Urartians in the Sevan Lake Basin. I. The Southern Shores. Documenti Asiana VII. CNR: Inst. Di Studi Sulle Civilta Dell'Egeo E Del Vicino Oriente. Roma, 325-350.

***Kunze R., Bobokhyan A., Meliksetian K., Pernicka E., Wolf D.* 2011.**
Archäologische Untersuchungen zur Umgebung der Goldgruben in Armenien mit Schwerpunkt Sotk, Provinz Gegharkunik, Veröffentlichungen des Landesamtes für Denkmalpflege und Archäologie Sachsen Anhalt - Landesmuseum für Vorgeschichte 64, Halle, 17-49.

***Wolf D., Borg G., Pernicka E., Meliksetian Kh., Klinze Re., Bobokhyan A.* 2011.**
Geoarchäologische Unlersuchungen der Goldvorkommen von Solk und Fiolelovo, Armenien, Archäologie in Armenien. Ergebnisse der Kooperationsprojekte 2010-Ein Vorbericht, Halle (Saale), 51-72.

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Էջադրումը և ձևավորումը
Արթուր Հարությունյանի

Շապիկը՝
Ռոման Հովսեփյանի

Habitus-ի խմբագրակազմը շնորհակալություն է հայտնում ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր **Հարություն Մարությանին** և **Մարիամ Շահմուրադյանին**՝ խմբագրական աշխատանքներին աջակցելու և խորհուրդների համար:

Շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Լևոն Աբրահամյանին**՝ իր հեղինակած երգիծանկարները տրամադրելու համար:

Խմբագրության հասցեն՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ. 15,
Habitus-ի էլեկտրոնային փոստը՝ habitus.iae.am@gmail.com
Կայքը՝ www.iae.am, www.iae.am/hy/HABITUS

Editorial office:
Institute of Archaeology and Ethnography, NAS RA.
Address: 15 Charents str., 0025, Yerevan, Armenia
Email of Habitus: habitus.iae.am@gmail.com
Web page: www.iae.am, www.iae.am/en/Habitus-2

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 70×100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
16.5 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY · 2

HABITUS · 2